— Բայց դուք որտեղի՞ց գիտէք, որ ես նրա որդեգիրն եմ:

— Ես բոլորը գիտեմ... — պատասխանեց նա խորհրդաւոր ձայնով:

Մենք ճանապարհ ընկանք: Տանտիրոջ ընտանիքը շատ սիրով ճանապարհ դրեց ինձ, կարծես, ես տարիներով նրանց մէջ ապրած լինէի:

Տանտիրոջ միջնակ որդին, որ պէտք է առաջնորդէր ինձ մինչեւ եզիդիների գլխաւորի վրանը, մի կատարեալ դիւցազն էր. նա իր ձիու վրայ նստած, կարծես թէ, կազմում էր նրա հետ մի ամբողջ մարմին, որ ստեղծուած էր պատերազմի համար: Ես երբեք չեմ մոռանայ նրա խօսքը, որ ճանապարհին ասաց ինձ. «Մեր կեանքը սրի մէջն է»...

Մենք գնացինք ուղիղ ճանապարհով, եւ ոչ լեռների միջով, որպէս տանում էր Մըհէն, եւ նոյն աւուր երեկոյեան պահուն հասանք Ս. — բէկի վրաններին:

ԽԳ. ԵԶԻԴԻՆԵՐ

Մենք հասանք եզիդիների բէկի չադրներին նոյն աւուր երեկոյեան պահուն, երբ արեւն արդէն մտած էր: Երկու մարդ կէս ճանապարհի վրայ սպասում էին, եւ մեզ ուղղակի տարան բէկի վրանը: Ասլանը այնտեղ էր. նա երբ տեսաւ ինձ, «վերջապէս եկար դու» ասաց եւ ժպիտի նման մի բան երեւաց նրա սառն դէմքի վրայ:

Մի փոքրիկ, կանաչազարդ հովիտի մէջ զետեղուած էին եզիդիների չադրները մի քանի հարիւրի չափ, իսկ կենտրոնում կազմուած էր բէկի վրանը: Նա որոշւում էր միւս բոլորից իր մեծութեամբ եւ գեղեցկութեամբ: Նա բաժանուած էր չորս մասի, — մէկի մէջ, ուր ընդունեցին մեզ, նստած էր ինքը բէկը, եւ դիտակը ձեռին անդադար նայում էր այս կողմ եւ այն կողմ, կարծես, նա միշտ երկիւղի մէջ էր, չիցէ թէ թշնամու անակնկալ յարձակում լինի նրա վրայ: — Այդ մասը նրա հիւրանոցն էր: Նրա առջեւ, մերկ գետնի վրայ կարգով ցցուած էին մի քանի երկայն նիզակներ, շինուած այն եղէգներից, որ բուսնում են Տիգրիսի եզերքի վրայ, որոնք այնքան թեքուն եւ անբեկանելի են, որ կարծես բնութիւնն ինքը ստեղծել էր մահուան գործիք դառնալու: Հիւրանոցի սիւներից քարշ էին տուած զէնքերի այլեւայլ տեսակներ, որպիսի են՝ վահաններ, սրեր եւ զանազան հրացան գործիքներ: Հիւրանոցի աջակողմեան մասնում կապած էին մի քանի ձիաներ, թամքած եւ բոլորովին կազմ ու պատրաստ: Այդ նրա համար էր, եթէ վտանգ պատահի, իսկոյն տէրերը թռչեն նրանց վրայ եւ դուրս գան թշնամու առջեւ: Հիւրանոցի ձախակողմեան մասնում զետեղուած էին բէկի թիկնապահները, որոնք նրանից միշտ անբաժան են